ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, "Լոռու մարզ" նոտարական տարածք:
Երկու հազար տասնութ թվականի հունիսի չորսին:

Քաղաքացի **ՄԱՆՎԵԼ ՄԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ** (ծնված 13.08.1957թ., ՀՀ քաղ. անձնագիր՝ AN0481150, տրված 052-ի կողմից 20.05.2013թ., հաշվառվել է՝ ք. Սպիտակ, Շահումյան փող., 6/9 հասցեում), այսուհետ՝ **«ՎԱՐՁԱՏՈՒ»**, մի կողմից և

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 13) ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար՝ Մինաս Մինասյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության աշխատակազմի Սպիտակի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ **ՍԱՄՎԵԼ ԴԱՎԹԻ ԽՈՅԵՑՅԱՆԸ** (ծնված 13.09.1980թ., ՀՀ քաղ. անձնագիր՝ AN0241009, տրված 052-ի կողմից 09.08.2012թ., հաշվառված՝ ք. Սպիտակ, Տաշիր թղմ., տ. 1/1 հասցեում), ով գործում է երկու հազար տասնութ թվականի մայիսի քսանհինգին (25.05.2018թ.) տրված N ՄՄ/ՀՈԱ/14358-18 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ **«ՎԱՐՁԱԿԱԼ»**, մյուս կողմից,

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է համապատասխան վարձավճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ **Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ոփյան փողոցի բնակելի տուն թիվ 54** հասցեում գտնվող բնակելի տանից՝ **110.86 ք.մ** մակերեսով տարածք, որի հատակագիծը կցվում է և համարվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը՝ վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին (սեփականության վկայական N **1131138** տրված՝ **02/12/2004թ.**՝ Անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի Սպիտակի տարածքային ստորաբաժանման կողմից):

1.3.Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է նաև Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի **Լոռու մարզային ստորաբաժանման** կողմից **23 մայիսի 2018թ.** տրված N **ՍՏ-23052018-06-0033** միասնական տեղեկանքով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտը ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև **25.12.2019թ. (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար տասնինները թվականը)**:

2.3 Յուրաքանչյուր տարվա համար սույն պայմանագիրը կգործի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որից հետո կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է **240000 (երկու հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ գումար, ներառյալ եկամտային հարկը:

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Վարձակալը Վարձատուին է տրամադրում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 20-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

3.4 Վարձակալը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:
3.5 Եթե պայմանագրի 3.4 կետով սահմանված ժամկետում Վարձակալը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Վարձատուն պարտավոր է՝
4.1.1 Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:
4.1.2 Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:
4.1.3 Վարձակալած տարածքում ապահովել էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:
4.1.4 Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին:
4.2 Վարձատուն իրավունք ունի՝
4.2.1 Պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:
4.2.2 Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար:
4.2.3 Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:
4.2.4. Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

4.3 Վարձակալը պարտավոր է՝
4.3.1 Ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար վարձավճարը, ինչպես նաև վճարել էլեկտրաէներգիայի, գազի և ջրի վարձավճարները համապատասխան մատակարար կազմակերպություններին:
4.3.2 Ապահովել Վարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար:
4.3.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան:
4.3.4 Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:
4.3.5. Վարձակալը պարտավորվում է վարձակալած տարածքը նույնությամբ վերադարձնել Վարձատուին՝ հաշվի առնելով բնական մաշվածությունը:
4.4 Վարձակալը իրավունք ունի՝
4.4.1 Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից, իսկ եթե Օբյեկտի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:
4.4.2 Օբյեկտը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում:
4.4.3 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:
4.4.4. Վարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ մեկ ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տոկոսի) չափով:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4 Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վարձատուին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

5.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ «Բնակելի տարածքի վարձակալության» պայմանագրով վարձակության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝ ցանկացած ժամանակ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վարձատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.procurement.am հասցեով ինտերնետային կայքում «պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.2 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ նոտարական վավերացման օրվանից սկսած երեսուն աշխատանքային օրվա ընթացքում պետական գրանցման:

8.3 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպում, եթե դրանք կատարված են գրավոր, վավերացված են նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

8.4 Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար:

8.5 Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:

8.6 Պայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:

8.7 ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը՝ բացառությամբ 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցուցակի 1-ին, 2-րդ, 3-րդ, 13-րդ, 14-րդ, 19-րդ և 21-րդ կետերով նախատեսված գնումների:

8.8 Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՎԱՐՁԱԿԱԼ

ՀՀ ԱՄՀՆ ՍԱՊ ծառայություն
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ ԱՄՀՆ ՍԱՊԾ աշխատակազմի
ղեկավար Մինաս Մինասյանի լիազորած
անձ՝ Սպիտակի ՍԱՏԲ-ի պետ
ՍԱՄՎԵԼ ԴԱՎԹԻ ԽՈՅԵՑՅԱՆ
(ծնված 13.09.1980թ., ՀՀ քաղ. անձնագիր՝ AN0241009, տրված 052-ի կողմից 09.08.2012թ., հաշվառված՝ ք. Սպիտակ, Տաշիր թղմ., տ. 1/1 հասցեում)

(ստորագրություն)

ՎԱՐՁԱՏՈՒ

ՄԱՆՎԵԼ ՄԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(ծնված 13.08.1957թ.,
ՀՀ քաղ. Անձնագիր AN0481150,
Հ/Հ 220131956173000

(ստորագրություն)

Նոտարական ակտի կոդ: 504-20180604-37-2581875
Նոտարական ակտի գաղտնագիր: RNARLQ

Վավերացման մակագրություն կնքված պայմանագրի վրա

Երկու հազար տասնութ թվականի հունիսի չորսին:
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության ՞Լոռու մարզ՞ նոտարական տարածքի նոտար ՎԱՉԻԿ ԱԼԵՔՍԱՆԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձի (անձանց) իրավունակությունը, նրա (նրանց) ներկայացուցչի (ների) լիազորությունները, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ _____ իրավունքները ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում N 1208

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյան

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

(մասշտաբը)



Կատարող _____

(ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 12 նոյեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Սպիտակ բ. Ոփյան փողոց 54 գրասենյակ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 08062018-06-0015., Պայմանագիր 04/06/2018թ. սեղանամատյան թիվ 1208 հաստատված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին, 07/11/2019թ. սեղ. 3800

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 12112019-06-0071, գաղտնաբառ՝ KY9TAY3RPQLA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-006-0511-0004-001	Գրասենյակ	110.86 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագիրը գործում է մինչև 25.12.2020թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը. ազգանունը՝ Հայկուհի Պապիկյան

Ձբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 12112019-06-0071, գաղտնաբառ՝ KY9TAY3RPQLA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Նոտարական ակտի կոդ: 504-20191107-117-4291242
Նոտարական ակտի գաղտնագիր: 5XYH54

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

04.06.2018 թվականին կնքված սեղանամատյանում թիվ 1208 համարով գրանցված
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
փոփոխություն կատարելու մասին

Հայաստանի Հանրապետություն, ՝՝Լոռու մարզ՝՝ նոտարական տարածք:
Երկու հազար տասնինը թվականի նոյեմբերի յոթին:

Մենք՝ քաղ. ՄԱՆՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՍ, ծնված՝ 13/08/1957թ.-ին, անձնագիր՝ AN0481150, տրված՝ 20/05/2013թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ՍՊԻՏԱԿ, ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ., 6/9 հասցեում, այսուհետ՝ ՝՝**ԿՈՂՄ 1**՝՝ մի կողմից, և
ՀՀ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՄ՝ գործող նախկին «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության» փոխարեն, համաձայն ՀՀ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 13-րդ կետի (իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 13, ՀՎՀՀ՝ 02505511, Գրանցման համար՝ 286.184.1024769) ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Վանիկ Բաբաջանյանի, ում անունից 14/10/2019թ. տրված թիվ 02/12-1/24326-2019 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Սպիտակի տարածքային բաժնի պետ **ՍԱՄՎԵԼ ԴԱՎԹԻ ԽՈՅԵՑՅԱՆԸ** (ծնված 13.09.1980թ., ՀՀ քաղ. անձնագիր՝ AN0241009, տրված 052-ի կողմից 09.08.2012թ., հաշվառված՝ ք. Սպիտակ, Տաշիր թղմ., տ. 1/1 հասցեում), այսուհետ՝ ՝՝**ԿՈՂՄ 2**՝՝ մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին-առանձին նաև՝ Կողմ, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին

Հիմք ընդունելով ՝՝7՝՝ հոկտեմբերի 2019թ. ՀՀ Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07102019-06-0044 վկայականը և Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովության ծառայության գլխավոր քարտուղարի լիազորագիրը՝
04.06.2018 թվականին (չորսը հունիսի երկու հազար տասնութ թվական) կնքված սեղանամատյանում թիվ 1208 համարով գրանցված ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ կատարել հետևյալ փոփոխությունը՝

Վերնագրում ՝՝ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ՝՝ բառերը փոխարինել ՝՝ԳՐԱՍԵՆՅԱԿԻ՝՝ բառով:
1.1 կետում նշված ՝՝բնակելի տուն՝՝ բառերը փոխարինել ՝՝գրասենյակ՝՝ բառով, իսկ ՝՝բնակելի տանից՝՝ բառերը ՝՝գրասենյակից՝՝ բառով:
6-րդ կետում նշված ՝՝բնակելի տարածքի՝՝ բառերը փոխարինել ՝՝գրասենյակի՝՝ բառով:
2.2 կետը խմբագրել և շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝
Սույն պայմանագիրը գործում է մինչև 25/12/2020 թվականը (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար քսան թվականը):

Սույն պայմանագիրը հանդիսանում է **04.06.2018 թվականին կնքված սեղանամատյանում թիվ 1208 համարով գրանցված ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ անբաժանելի մասը:**

Սույն Պայմանագրի վավերացման հետ կապված ծախսերը կատարում է Կողմ 2-ը:

Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, մեկ օրինակը պահվում է ՀՀ ՝՝Լոռու մարզ՝՝ նստավայր ք. Սպիտակ տարածքային նոտարական գրասենյակում, մյուս երեք օրինակները տրվում են կողմերին:

Սույն պայմանագիրը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, **նոտարական վավերացման օրվանից սկսած երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:**

Կողմ 1

ՄԱՆՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կողմ 2

ՀՀ ՍԱԾ
լիազորված անձ
ՍԱՄՎԵԼ ԴԱՎԹԻ ԽՈՅԵՑՅԱՆ

Վավերացման մակագրություն կնքված Պայմանագրի վրա

Երկու հազար տասնինը թվականի նոյեմբերի յոթին:
Սույն Պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության "Լոռու մարզ" նոտարական տարածքի նոտար ՎԱՉԻԿ ՄԱԹՈՍՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը սույն Պայմանագիրը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը ստուգված են:
Գրանցված է սեղանամատյանում N 3800

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 24 դեկտեմբերի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Ոփյան փողոց 54 գրասենյակ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 08062018-06-0015,, Պայմանագիր 04/06/2018թ. սեղանամատյան թիվ 1208 հաստատված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին, 10/12/2020թ. սեղ. 2113

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 24122020-06-0046, գաղտնաբառ՝ PLWKCVAXQTJN

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-006-0511-0004-001	Գրասենյակ	110.86 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ մինչև 25.12.2022թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հայկուհի Պապիկյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 24122020-06-0046, գաղտնաբառ՝ PLWKCVAXQTJN

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Նոտարական ակտի կոդ: 504-20201210-88-4836709
Նոտարական ակտի գաղտնագիր: JRCLWD

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն ՝՝Լոռու մարզ՝՝՝ նոտարական տարածք:
Երկու հազար քսան թվականի դեկտեմբերի տասին:

ԵՍ՝ քաղ. ԿԱՐԻՆԵ ՄԱՑԱԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆՍ, ծնված՝ 09/05/1958թ.-ին, ՀԾՀ՝ 5905580200, անձնագիր՝ AR0226320, տրված՝ 16/03/2017թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ., 6 Շ, 9ԲՆ հասցեում, հայտնում եմ, որ համաձայն եմ իմ ամուսինը՝ **ՄԱՆՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ,** ծնված՝ 13/08/1957թ.-ին, անձնագիր՝ AN0481150, տրված՝ 20/05/2013թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ՍՊԻՏԱԿ, ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ., 6/9 հասցեում,
ՀՀ "ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ" ՊՄ-ի հետ կնքի 04.06.2018 թվականին (չորսը հունիսի երկու հազար տասնութ թվական) կնքված սեղանամատյանում թիվ 1208 համարով գրանցված ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ փոփոխություն կատարելու մասին ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ փոփոխելով Պայմանագրի 2.2 կետը, խմբագրելով և շարադրելով հետևյալը՝
սույն պայմանագիրը գործում է մինչև 25/12/2022 թվականը (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար քսաներկու թվականը):

Ստորագրություն _____ **ԿԱՐԻՆԵ ՄԱՑԱԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Կարինե Մուրադյան

Երկու հազար քսան թվականի դեկտեմբերի տասին:
Սույն համաձայնությունը վավերացվել է իմ՝ Հայաստանի Հանրապետության ՝՝Լոռու մարզ՝՝ նոտարական տարածքի նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյանիս կողմից: Համաձայնությունը **ԿԱՐԻՆԵ ՄԱՑԱԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ** ստորագրել է իմ ներկայությամբ: Նրա ինքնությունը հաստատված է, գործունակությունը ստուգված է:

Գրանցված է սեղանամատյանում N 2112

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյան

Նոտարական ակտի կոդ: 504-20201210-117-4836680
Նոտարական ակտի գաղտնագիր: USO2ZO

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

04.06.2018 թվականին կնքված սեղանամատյանում թիվ 1208 համարով գրանցված
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
փոփոխություն կատարելու մասին

Հայաստանի Հանրապետություն, ՞Լոռու մարզ՞ նոտարական տարածք:
Երկու հազար քսան թվականի դեկտեմբերի տասին:

Մենք՝ քաղ. ՄԱՆՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՍ, ծնված՝ 13/08/1957թ.-ին, անձնագիր՝ AN0481150, տրված՝ 20/05/2013թ.-ին, 052-ի կողմից, հաշվառված՝ ՍՊԻՏԱԿ, ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ., 6/9 հասցեում, այսուհետ՝ ՞**ԿՈՂՄ 1**՞ մի կողմից, և
ՀՀ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՄ՝ գործող նախկին «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության» փոխարեն, համաձայն ՀՀ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 13-րդ կետի (իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 13, ՀՎՀՀ՝ 02505511, Գրանցման համար՝ 286.184.1024769) ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հարություն Գևորգյանի, ում անունից 01/12/2020թ. տրված թիվ 02/12-1/27088-20 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Սպիտակի տարածքային բաժնի պետ **ՍԱՄՎԵԼ ԴԱՎԹԻ ԽՈՅԵՑՅԱՆԸ** (ծնված 13.09.1980թ., ՀՀ քաղ. անձնագիր՝ AN0241009, տրված 052-ի կողմից 09.08.2012թ., հաշվառված՝ ք. Սպիտակ, Տաշիր թղմ., տ. 1/1 հասցեում), այսուհետ՝ ՞**ԿՈՂՄ 2**՞ մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին-առանձին նաև՝ Կողմ, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին

04.06.2018 թվականին (չորսը հունիսի երկու հազար տասնութ թվական) կնքված սեղանամատյանում թիվ 1208 համարով գրանցված ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ կատարել հետևյալ փոփոխությունը՝

2.2 կետը խմբագրել և շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝
Սույն պայմանագիրը գործում է մինչև 25/12/2022 թվականը (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար քսաներկու թվականը):

Սույն պայմանագիրը հանդիսանում է **04.06.2018 թվականին կնքված սեղանամատյանում թիվ 1208 համարով գրանցված ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ անբաժանելի մասը:**

Սույն Պայմանագրի վավերացման հետ կապված ծախսերը կատարում է Կողմ 2-ը:

Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, մեկ օրինակը պահվում է ՀՀ ՞Լոռու մարզ՞ նստավայր ք. Սպիտակ տարածքային նոտարական գրասենյակում, մյուս երեք օրինակները տրվում են կողմերին:

Սույն պայմանագիրը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, **նոտարական վավերացման օրվանից սկսած երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:**

Կողմ 1	**Կողմ 2**
ՄԱՆՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ	**ՀՀ ՍԱԾ** **լիազորված անձ** **ՍԱՄՎԵԼ ԴԱՎԹԻ ԽՈՅԵՑՅԱՆ**

Վավերացման մակագրություն կնքված Պայմանագրի վրա

Երկու հազար քսան թվականի դեկտեմբերի տասին:
Սույն Պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության "Լոռու մարզ" նոտարական տարածքի նոտար ՎԱՉԻԿ ՄԱԹՈՍՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը սույն Պայմանագիրը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը և իրավաբանական անձի իրավունակությունը ստուգված են:
Գրանցված է սեղանամատյանում N 2113

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյան